

Ա. ՄԻԿՈՅԱՆ

ՃԱՌ
ՀԱՅԿ(Բ)Կ XVIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ


Պ Ե Տ Տ Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒԹ

31 JAN 2018

Ա. ՄԻԿՈՅԱՆ



ՃԱՌ
ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 թ. մարտի 13-ին

ՊԵՏՀԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

Բնկերներ, Համեկ(բ)Կ ԽՎԻ Համագումարն առանձնա-
հատուկ նշանավոր տեղ է զրայիլու մեր կուսակցության
պատմության մեջ:

Նախորդ բոլոր համագումարներում կուսակցությունը
զրադարձ եր նրանով, վոր մշակում եր սոցիալիզմի հաղ-
թանակը կազմակերպելու միջոցներ: ԽՎԻ Համագումարը—
այդ՝ մեր կուսակցության առաջին համագումարն ե, վորը
հնարավորություն ունի, սոցիալիզմի հաղթանակի կազմա-
կերպման միջոցներ մշակելու փոխարեն, իր վորոշումներում
հավասարելու սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում և նշե-
լու, վոր մեր յերկրը թեակոմիել և զարգացման նոր շրջա-
նը, անդասակարգ սոցիալիստական հասարակության կառու-
ցումն ավարտելու և աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզ-
մին անցնելու շրջանը: Ահա թե ինչու այս համագումարը
շրջադարձային համագումար ե հանդիսանալու մեր ամբողջ
կուսակցության համար: Համագումարն այդ հնարավորու-
թյունն ստացավ այն բանի շնորհիվ, վոր մեր կենտրոնական
կոմիտեն տարել ե կուսակցությունը լնինյան ուղիով, վոր
կենտրոնական կոմիտեյի գլուխ ե կանոնած ընկեր Ստալի-
նը: (Ծափահարություններ):

Փակելով մեր կուսակցության պատմության մի գլուխ
ևս՝ սոցիալիզմի համար պայքարելու գլուխը և բաց անելով
կոմունիզմի լիակատար հաղթանակի համար պայքարելու
նոր գլուխը, մեր համագումարը հնարավորություն ունի
ամբողջ աշխարհին աղդաբարելու, վոր՝ ԽՍՀՄ-ում վերաց-
ված ե մարդու շահագործումը մարդու կողմից և վոչնչաց-
ված են գասակարգեր ծնող պատճառները. մեր յերկի ժո-
ղովուրդները միավորված են սոցիալիստական հայրենիքի

Ա. МИКОЯН

РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы

Ереван, 1939



11-2834891

իրավահայասարքաղացիների յեղբայրական սերտ ընտանիքում։ մեր յերկիրը հետամնաց, ապրաբային յերկրից մի տասնամյակում գարձավաշխարհիս խոչըրագույն ինդուստրիալ տերությունը։ մեր բազմամյիլիոն գյուղացիությունն ամենակարծ ժամանակամիջոցում վերակառուցեց իր կյանքը սոցիալիստական յեղանակով և, զինված ստալինյան կուտընտեսային կանոնադրությամբ, բարձրացնում ե իր կուլտուրականությունը և ունենորությունը։

Ահա թե ինչու, ընկերներ, հատուկ նշանակություն ունի ընկեր Ստալինի այն հայտարարությունը, վոր մեզ մոտ «Հիմնականում իրականացված ե կոմունիզմի առաջին փուլը՝ սոցիալիզմը»։ Ահա թե ինչու մենք լիակատար իրավունքով կարող ենք մեր Համկ(թ)Կ ԽVIII համագումարն անվանել Հաղթանակած սոցիալիզմի համագումար, սոցիալիզմի գեպի կոմունիզմը կատարվող շրջադարձի համագումար։ (Բուռն ծափահարություններ)։

Վերջին յերկու համագումարների միջև ընկած ժամանակաշրջանն առանձնապես աչքի յե ընկնում նրանով, վոր մեզ հաջողվեց հայտաբերել և վոչնչացնել հակածեղափոխության ոջախները՝ տրոցիկստական-բուժաբինական լանդաներին, վերացնել մեր կուսակցության մարմնի վրայի թարախակալած պալարները (հոյնին նարանք), վորի հետեանքով կուսակցությունն եւ ավելի ամրակուռ, առողջու զոր դարձավ և միավորվեց իր կոմիտոնական կոմիտեյի շուրջը, ընկեր Ստալինի չուրջը, ինչպես յերբեք։ (Բուռն ծափահարություններ, բոլորը վատէի յեն կանգնում)։

Ընկեր Ստալինի հաշվեառ զեկուցումը պատմական մեծագույն կացմորություն ունեցող մի փաստ ե ներկայացնում։ Ընկեր Ստալինը համոզունքի ամբողջ ուժով, պարզ ու հստակորեն պատմում եր գժվաբաղույն այն անցումների մասին, վոր կատարել ե կուսակցությունը, այն հսկայական հաղթանակների մասին, վոր տարել ե նա, և նկարագրեց մեր յերկիրի ուժն ու զորությունը՝ ի հակալիք նեխով կազմիտությունի, ի հակալչու կապիտալիզմի ազիարհի,

վորը տակնուզիրա յե լինում անլուծելի հակասություններով և արյունահեղ պատերազմներով, պատերազմներ, վորոնք դժբախտություն և քայլայում են բերում ժողովրդական ժամանակներին։

Ընկեր Ստալինի զեկուցումը միայն հաշվեառ լություն չեր այն բանի մասին, ինչ վոր յեղել ե, այդ զեկուցումը մի հանճարեղ կանխատեսում ե, մեր կուսակցության գիրեկ-տիլն՝ առաջիկա շատ տարիների համար։

Դեռ ալելին, ընկեր Ստալինի զեկուցումը մի ավանդ ե կոմմանիզմի թեորիայի մեջ, ընկեր Ստալինի ամենաարժեքավոր նվերը Համկ(թ)Կ ԽVIII համագումարին։

Ահա թե ինչու ընկեր Ստալինի հաշվեառ զեկուցումն ուրախացնում ու վոգենորում ե մեր կուսակցությանը և մեր ամբողջ ժողովրդին կոմունիզմի հետապա հաղթանակների համար։ (Բուռն ծափահարություններ)։

Համկ(թ)Կ ԽVII և ԽVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանը հարուստ ե վոչ միայն սոցիալիզմի կառուցման ճակատում կուսակցության տարած մեծագույն հաղթանակներով—այդ ժամանակաշրջանը նշանավոր ե մեր կուսակցության պատմության մեջ թեորիայի զարգացման տեսակետից, նա հանդիսանում ե կոմունիզմի թեորիայի ծաղկման ժամանակաշրջաննը։

Ընկեր Ստալինը ժամանակին միանդամայն իրավացի կերպով նշել ե թեորետիկական ճակատում հետ մնալը։ Յեւ ահա, յերբ հետապարձ հայացք ես զցում ԽVII համագումարից հետո անցած հինգ տարվա վրա, աեսնում ես, թե ինչպես քայլ առ քայլ վերացվում եր թեորիայի առաջարից զում մեր այդ հետ մնալը։ Այդ տարիների ընթացքում կուսակցությունը մշակել ե մեծադրույն ու կարևորագույն պատմական չորս փաստաթուղթ, վորոնք ապրելու յեն դառըերով։

ԽVII համագումարից հետո ընկեր Ստալինը, կենտրոնական կոմիտեյի անդամների հետ միասին, առաջավոր կուտնականների հետ միասին, մշակեց Գյուղատնտեսական

արտելի կանոնադրությունը։ Այդ կանոնադրությունն առում
է, թե ինչպես պետք է սոցիալիստուրեն ապրի կոլտնտեսու-
թյունները մտած բազմամիլիոն գյուղացիությունը։ Ընկեր
Ստալինը, պատմությունից ստացած վոչ մի փորձ չընենա-
լով, կարողացավ հանճարեղ խորաթափանցությամբ ընդ-
հանրացնել կոլտնտեսությունների աշխատանքի մեղ մոտ յե-
ղած կարճատև փորձը և դրեց այն հիմքերը, վորոնց վրա
կառուցվում ե սոցիալիզմը գյուղում։ Գյուղանոնեսական
արտելի կանոնադրության մեջ դիմակորն այն է, վոր ընկեր
Ստալինը կարողացավ նըանում ճիշտ գուղակցել կոլտնտեսա-
կանների անճնական շահերը հասարակական շահերի հետ,
յնթարկելով անճնականը հասարակականին։ Ահա այդ գու-
ղակցումը հնարավորություն տվեց կոլտնտեսային կարգե-
րին ամրակցելու հարցուր-միլիոնանոց գյուղացիությունը և,
յնթարկելով անճնականը հասարակականին, ավելի ու ավել-
ի վեր բարձրացնել հասարակական ոկզրուելը։

Կոլտնտեսային արտելի Ստալինյան կանոնադրությունը
կոլտնտեսային կյանքի, կոլտնտեսային կարգերի գործուն
Սահմանադրությունն և հանդիսանում վոչ միայն այսոր,
այլև մինչև կոմունիզմի հաղթանակը դեռ յերկար տարիներ
դրոշ և հանդիսանալու կոլտնտեսային գյուղացիության հա-
մար։ Յեթ վոչ միայն մեզ, Խորհրդային Միության մարդ-
կանց համար։ Հենց վոր կապիտալիզմի յերկրների ազա-
տագրված գյուղացիությունը դեռ պցի իր վրայից կապի-
տալիզմի լուծը, յերբ նա ցանկանա իմանալ, թե ինչպես
ուրեմն պետք ե կառուցի իր նոր կյանքը, նա աղաս կինի
յերկար վորոնումներից և կոլտնտեսային կյանքի այդ Ստա-
լինյան կանոնադրության մեջ պատասխան կըտնի այն հար-
ցին, թե նա ինքը ինչպես պետք ե կառուցի աղաս գյուղա-
ցու կյանքը, ինչպես պետք ե կառուցի սոցիալիզմը գյու-
ղաւում։

Թեորետիկ հոկայական նշանակություն ունեցող յերկ-
րորդ փաստաթուղթը—այդ՝ Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունների Միության Սահմանադրությունն և,

վորը նույնպես մշակել ե ընկեր Ստալինը, Սահմանադրու-
թյուն, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ սոցիալիստական հա-
սարակություն կազմակերպելու ուսմունքի շարադրանքը։
Այդ փաստաթուղթը ևս ապրելու յե դարերով, վորովհետև
դա վոչ միայն ազատությունների մի խարախա յե խորհըբ-
դային քաղաքացիների համար, մեր նվազումների կողեքը,
այլև ծրագիր և կապիտալիզմի լծի տակ գտնվող աշխարհիս
բոլոր աշխատավորների համար։ Մեր ստալինյան Սահմա-
նադրության մեջ տրված ե սոցիալիստական հասարակու-
թյան կենդանի պատկերը։ Ստալինյան Սահմանադրությունն
ուղեցույց աստղ ե մյուս յերկրների հեղափոխական կուսակ-
ցությունների համար, վորոնք կրիտենան, թե իշխանու-
թյունն իրենց ձեռքը վերցնելով ինչպես պետք ե կառուցել
սոցիալիստական հասարակություն, այսինքն՝ կրիտենան
այն, ինչ վոր մենք իր ժամանակին չգիտեյինք։

Այդ ժամանակաշրջանում հրատարակված յերրորդ կա-
րևորագույն փաստաթուղթն և համարյա ամբողջովին ընկեր
Ստալինի գրած Համամիութենական կոմունիստական (բոլ-
շևիկների) կուսակցության պատմության գապագիրքը, վո-
րը միենույն ժամանակ մարքսիզմ-լենինիզմի թեորիայի դա-
ստիքիրքն և, և վորն առձեռն զիրք ե դարձել Խորհրդային
Միության բոլոր զբաղետ մարդկանց ու ամբողջ աշխարհի
առաջավոր բանվորների համար։

Վերջապես, մեր կուսակցության չորրորդ թեորետիկ
աշխատաթունը—այդ՝ ներկա Համագումարում ընկեր Ստա-
լինի տված զեկուցման այն մասն և, վորտեղ խոսվում ե
սոցիալիստական պետության և խորհրդային ինտելիգենցի-
այի մասին։

Մեր թեորիայի մեջ ձեղչածք կար սոցիալիստական
պետության հարցում։ Անտարակույս, այդ ձեղչածքը չեր
կարող չանդրագանակ նաև մեր պրակտիկ աշխատանքի
վրա։ Ընկեր Ստալինը վերացրեց մարքսիզմ-լենինիզմի թեո-
րիայում յեղած այդ ձեղչածքը և իր զեկուցման մեջ մեզ
տվեց սոցիալիստական պետության և խորհրդային ինտելի-

գենցիայի վերաբերյալ ուսմունքը։ Դրանով իսկ մեր կուսակցությունն ընկեր Ստալինի ոգնությամբ այժմ լիովին վերացրեց թեորետիկական ճակատում հետ մնալը և մեր կուսակցությունն այժմ զինված և մարքուղմ-լենինիզմի բազմակողմանի թեորիայով, գիտական մի թեորիայով, վորի ստեղծագործողներն են Մարքսը, Ենդելսը, Լենինը և Ստալինը։ (Բուռն յերկարատև ծափահարություններ)։

ԼԱՅՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՐՄԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՄԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ խոսեց մեր արդյունաբերության աճման մասին, այն բանի մասին, վոր մենք կապիտալիստական յերկրներին հասել և նրանցից առաջ ենք անցել արտադրության տեմպերով ու տեխնիկայով, և հենց այդտեղ ել գրեց բնակչության մի հոգուն ընկնող մթերքների արտադրության հարցը։ Այդ չեշտը վոչ թե արտադրության բացարձակ չափի վրա, այլ բնակչության մի հոգու վրա դրվում ե մեզ մոտ առաջին անդամ։ Մենք վարժվել ենք այսպես համեմատելու։ որինակ, Անդվիայում արտադրվում ե 7 միլիոն տոնն չուզուն, մենք արտադրում ենք 15 միլիոն, հետեւաբար, առաջին տեղն ենք գրավում Անդվայի հետ համեմատած։ Ընկեր Ստալինը շատերի գլուխն սառուր ածեց։ Դա շատ լավ ողտակար ջուր ե միքանի տաք գլուխների համար (ուրախ աշխուժություն դակիլինում)։ Շատ շատերն այսպես են դատում։ յեթե մենք առաջին կամ յերկրորդ տեղն ենք գրավում աշխարհում, նշանակում ե ամեն ինչ լավ ե, կարելի յե հանգստանալ։ Միքանի տնտեսավարներ քուն են մտնում, գոռողանում են, գտնում են, վոր շտապելու կարիք չկա։ Իսկ վորտե՞ղ ե այն հարցի պատասխանը—ինչո՞ւ մեզ մոտ ապրանքը չի բավականացնում։

Ահա այդ հարցին պատասխան տվեց ընկեր Ստալինը։ Ընկեր Ստալինը ցույց տվեց, վոր մենք բացարձակ արտադրությամբ շատ լուրջ տեղ ենք գրավում աշխարհում, ուս-

որի պետք ե կարողանալ մեր հաջողությունները տրամադրել դարձնել նոր հաղթանակների համար, մեր կուսակցության լծակը դարձնել նոր պայքարի համար, նոր հաջողությունների համար, և վոչ թե հանդստանալ, ինչպես այդ կանեցին վոմանք։ Մեր հաջողություններն այնքան մէծ են, վոր բնակչության մի հոգուն ընկնող արտադրությամբ կապիտալիստական զիսավոր յերկրներին հասնելու և նրանցից առաջներու խնդիրը մոտ ե լուծման։

Այդ վերաբերում ե վոչ միայն մետաղուրդիային, ելեկտրոկայաններին և ընդհանրապես ծանր արդյունաբերությանը։ Դա ուղղակի վերաբերում ե և՛ սննդի, և՛ թեթև արդյունաբերությանը, և՛ լայն սպառման բոլոր աղբանքների արտադրությանը։

Ընկեր Ստալինը քանիցս ընդգծել ե բնակչության համար լայն սպառման ապրանքների արտադրությունը զարգացնելու անհրաժեշտությունը, վորովհետեւ ընկեր Ստալինը շարունակ հիշեցնում ե մեր մի խնդրի մասին՝ «Հոգատարությունն մարզու մասին»։

Ստախանովականների համամիութենական խորհրդակցությանը 1935 թվականի նոյեմբերին ընկեր Ստալինն ասել ե.

«...Սոցիալիզմը կարող ե հաղթել միմիայն աշխատանքի բարձր արտադրողականության բազայի վրա, ավելի բարձր, քան կատալիզմի պայմաններում, մթերքների և սպառման ամեն տեսակ առարկաների առատության բաղայի վրա, հասարակության բոլոր ժնդանների ունեոր և կուլտուրական կյանքի բազայի վրա»։

Մթերքների և լայն սպառման ապրանքների առատության վերաբերյալ այդ լոգունդն ե ահա, վոր պետք ե իրականացնենք մենք ամենայն համառությամբ։ Այստեղ մենք նախ և առաջ և ամենից ավելի բաղիւլում ենք թեթև արդյունաբերության աշխատանքին, մասնավորապես, տեքստիլ արդյունաբերության աշխատանքին։

Թեթև արդյունաբերությունը, ամբողջովին վերցրած, յերկրորդ հնդամյակի ընթացքում տվեց իր արտադրանքի 82 տոկոս աճ, այնուամենայնիվ նա իր պլանը չկատարեց:

Թեթև արդյունաբերության մեջ գլխավոր չարիքը—այդ՝ տեքստիլ և, գլխավորապես, բամբակեղենի արդյունաբերության հետ մնալն ե, իսկ արտադրության այդ ճյուղի մեջ, գլխավորապես, մանածագործության հետ մնալը, վորովհետև, բամբակի առկայության դեպքում, մենք կարող ենք լիառատ մանվածք տալ և մանվածքը կործածվեր ջուհակության վրա և արիկոտաժային արտադրանքի վրա, ըստվորում, յեթե չբավականացնելին տրիկոտաժային և ջուհակային պետական գործարանները,—կարելի կլիներ ոգտագործել տնայնագործական կոոպերացիայի հսկայական հնարավորությունները, բայց դժբախոտությունն այն ե, վոր մեզ մոտ մանածագործությունը դանդաղ ե աճում:

Բամբակեղենի արդյունաբերության 1937 թվականի արտադրանքը, 1932 թվականի հետ համեմատած, կազմեց 124,3%: Անբավարար աճում, վորովհետև հնդամյա պլանը ծրագրել եր մեծ աճում և մեր յերկրում գործվածքների կարիքներն արագ են աճում, ուստի դրանց պահանջարկը գենես չբավարարված ե մնում:

Առաջին հնդամյակում և յերկրորդ հնդամյակի առաջին տարիներին բամբակեղենի արդյունաբերության մեջ նեղ տեղ եր հանդիսանում հումքի պակասությունը: Այդ պատճառով մեր ջանքերը կենտրոնացված եյին բամբակի խորհրդային արտադրությունն ավելացնելու վրա:

Մեղ հաջողվեց հիբալի վիթխարի հաջողությունների հասնել այդ ասպարիզում: Մինչդեռ ցարիքմի ժամանակ 1913 թվականին ստացվել ե 13,1 միլիոն փութ թել-բամբակ, վերջին յերեք տարում մենք ստանում ենք միջին հաշվով տարեկան ավելի քան 50 միլիոն փութ թել-բամբակ, այսինքն՝ համարյա չորս անդամ ավելի: Դա պետք ե հնարավորություն տար գործվածքների արտադրությունը բարձրացնելու շատ ավելի, քան այդ տեղի ունի իրականում:

Դրա պատճառն այն ե, վոր մեր բամբակեղենի արդյունաբերությունը չի կարողանում հասցնել ամբողջ բամբակեղենամշամշակությունը: Ահա թե ինչու նրա պահեստներում գոյացել են բամբակի՝ նորմայից գուրս մեծ մնացորդներ, վորոնք մենք պետք ե վերամշակենք առաջիկա մեկ-յերկու տարում, արագորեն բարձրացնելով բամբակեղենի արդյունաբերությունը, մի հանդամանք, վորը պետք ետա բամբակեղեն գործվածքների արտավերության տարիկան ավելի ուժեղացված աճ, քան այդ տեղի ունի մինչև այժմ:

Այդպիսի զրություն ստեղծվեց այն պատճառով, վորթեթև Արդյունաբերության ֆողկոմատը, յերբ այնտեղ գեռ վնասարաններն եյին նստած, կապիտալ ներդրումները կենտրոնացնում եր, գլխավորապես, վոչ թե ընդհանրապես արդյունաբերության և, մասնավորապես, մանածագործության կարողությունները ավելացնելու վրա, այլ ամեն տեսակ «վերակառուցումների» վրա, վորոնք կամ արդյունք չեյին տալիս, կամ քիչ արդյունք եյին տալիս, քանի վոր նրանք վերակառուցում եյին հին դործարանները, փոխում եյին արտադրության բնույթը, «ռացիոնալացնում եյին», բայց արտադրանքը չեյին ավելացնում, կամ ավելացնում եյին չնչին չափով:

Ահա թե ինչու կառավարությունն ստիպված յեղալ չհաստատել մի շարք Փարբիկաների վերակառուցումը, վորի մեջ ծրագրված եր շատ փող ներդրել, առանց պատշաճ արդյունքի՝ լրացնելու արտադրանք բողնելու տեսակետից:

Բացի դրանից, գործարանների և Փարբիկաների հին սարքավորումն անինամ եր թողնված, առանց պատշաճ նորոգման: Այդ պատճառով, վերջին յերկու տարում, կուսակցության և կառավարության միջամտությունից հետո, մենք հասանք այն բանին, վոր հին սարքավորման հիմնական մասն արգեն նորմալ վիճակի յի բերված:

Մայր ստիճան անինամ եր թողնված նաև տեքստիլ մեքենաշինության բաղան, բայց այս մեկ և կես տարում, կուսակցության և կառավարության միջամտությունից հե-

տո, արագորեն հաջողվեց զարդացնել տեքստիլ մեքենաների արտադրությունը հայրենի գործարաններում, մի հանդամանք, վորը 1938 թվականին տվեց ավելի քան 200 հազ. էլեկտ աճ: 1939 թվականին պլանով նախատեսված ե 600 հազ. էլեկտ աճ, այսինքն միայն 1939 թվականին ավելի, քան նաևորդ 10 տարում:

Կուսակցության և Կառավարության ձեռք առած միջոցների հետևանքով տեքստիլ արդյունաբերությունը վոտքի յե կանոնում:

Տեքստիլ արդյունաբերության դեկավարության նորոգվելը նույնպես սկսում ե արդեն իր պտուղները տալ և, պետք ե յենթադրել, վոր Տեքստիլ Սրբյունաբերության ժողովրդական կոմիտացը—ընկեր Կոսիդինը կկարողանա ժանածաղործներին սովորեցնել բոլշևիկորեն աշխատել:

Մանածաղործների մեջ մրցությունը բարձրացնելու հարցով զբաղվեցին նաև տեքստիլ շրջանների տեղական կուսակցական կազմակերպությունները, մանավանդ կուսակցության իվանովյի մարզիոմը, վորտեղ ընկ. Սեղինը կաղմակերպում է մանածաղործներին նորանոր հաղթանակների համար և իշխանովյի մարզի Փարբիկաների հսկայական մեծամասնությունը կատարում ու դերակատարում ե եր պլանները:

Պետք ե յենթադրել, վոր մանածաղործները կիթողնեն իրենց արմատացած սովորությունը—չկատարել ծրագիրը և կյուրացնեն նոր սովորություն—ամեն անդամ ճշոտությունը կատարել ծրագիրը (ծափահարություններ):

Յես կանդ չեմ առնի թեթև ու մննդի արդյունաբերության բոլոր ճյուղերի վրա, արտադրանքի հսկայական աճաման վրա, մանավանդ սննդի արդյունաբերության, վորը ժամկետից շուտ կատարեց ինչպես առաջին, այնպես ել յերկրորդ հնդամյակը, տեխնիկական տեսակետից և արտադրության տեմպերով՝ համեմով ու առաջ անցնելով կապիտալիզմի դիմավոր յերկրներից:

Յես յելնում եմ այն բանից, վոր թեթև ու մննդի արդյունաբերության համապատասխան ճյուղերի ժողովրդա-

կան կոմիտարները հանդես կը այստեղ և համագումարին կպատմեն ինչպես արդյունաբերության դրությունը, այնպես ել նրա ինդիքտները:

Յես առիթ եմ ունեցել զրուցելու վորոշ աշխատողների հետ—ամուսինը և կինը զբաղված են պատասխանատու աշխատանքով: Կինը գանդատվում ե—«Դժբախտություն»: Խոկ ինչո՞ւմն ե բանը: Քի՞չ եք վաստակում, ի՞նչ ե:—«Վոչ, վաստակում ենք լավ, զրամ ունենք բավարար քանակությամբ, չնորհակալություն խորհրդային իշխանությանը»: Խոկ ինչո՞ւմն ե զժբախտությունը:—«Զենք կարողանում գտնել մի սպասուչի, ստիպված ենք ժամանակ խել պատասխանատու աշխատանքից, վորպեսզի կառավարենք տնային տնտեսությունը՝ կերակուր պատրաստելու և այլն»: Նա այդ մասին ասում ե անկեղծ վշառվ: Նրա համար դա դժբախտություն ե, բայց այդ «դժբախտությունը» մեր ամբողջ խորհրդային ժողովրդի յերջանկությունն ե, յերջանկություն այն պատճառով, վոր ժողովրդական մասսաների կյանքն այնպես ե վերակառուցված, բնակչության ունեսորությունն այնպես ու աճել, վոր չի կարելի գտնել բավարար քանակությամբ մարդիկ, վորոնք համաձայնվեն լինել սպասուչի, տնային աշխատող, վորովհետեւ չկա գործադրկություն, չկա կարիք: (Ծափահարություններ):

Բայց յես պետք ե վշտացնեմ վորմանց և ասեմ, վոր այդ «դժբախտությունն» այսուհետեւ ել կամի ավելի ու ավելի մեծ չափով, վորովհետեւ մեր յերջանիկ ժողովուրդը հետաղյում ել ավելի քիչ չափով կցանկանա զնալ սպասավորության և լավ ել կանի: (Ծիծաղ):

Խոկ ի՞նչ հետեւություններ պետք ե անել դրանից: Ծառայության մեջ աշխատել հարկավոր ե, վո՞չ բոլորը կարող են լինել տանը, խոհանոցում: Կա այդ դրությունից զուրս զալու լիակատար հնարավորություն: Կարելի յե անել այնպես, վոր մարդիկ կարողանան աշխատել ծառայության մեջ և կարողանան տանը յոլա զնալ առանց մեծ նեղություններ քաշելու կերակուր պատրաստելու համար ու տնային տնտեսության համար:

Այս գործում մենք արդեն շատ բան ենք սովորել ու զեռ պետք ե սոլորենք ամերիկացիներից։ Այն ժամանակ, յերբ ամերիկացիների մոտ դեռ ծաղկման շրջան եր, բանվորական ուժը չեր բավականացնում, այն ժամանակ սպասուհի վարձեն ել դժվար եր։ Այդ ժամանակ ամերիկացիները զարգացրին արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք հեշտացնում են տնտեսությունը։

Դրա համար մեզանից ի՞նչ ե պահանջվում անել։ Պետք ե ընդարձակել գաղային ու եեկտրական պլիտաների, հարմար ամանեղենի, աման լվանացու պարզ սարքավորման, փոշիծիչների, տնային սառնարանների և այլնի արտադրությունը։ Պետք ե ծավալել հասարակական լվացքատների և հաղուստի քիմիական մաքրման ցանցը, կոչկեղենի նորոգման արհեստանոցները, շոր արթուկելու արհեստանոցները և այլն։ Մոսկվայում և Լենինգրադում արդեն ամերիկյան տիպով ծավալված ե մեխանիզացիայի յենթարկված նորոգման արհեստանոցների լայն ցանցի կազմակերպումը, վորտեղ, դործը լավ դնելու դեպքում, —իսկ այդ մենք կարող ենք և պետք ե անենք, —կարելի յե մտնել արհեստանոց, կոչիկը տալ նորոգման, կնորողեն 10—15 րոպեյում, իսկ այդ ժամանակվա ընթացքում տեսնում ես՝ կոստյումդ արթուկում են, իսկ դու նստած թերթ ես կարդում։ (Ծիծաղ, ծափահարություններ)։

Հարկավոր ե ծավալել հասարակական ճաշարանների ցանցը։ Ինչո՞ւ մենք չենք կարող անել այդ։ Այս բնադրավուում ևս խողիր ե ծառացած՝ «հասնել ու առաջ անցնել», և մենք պետք ե հասնենք շուտով, անպայմանորեն։ (Ծափահարություններ)։

Սննդամթերքների բնադրավառում անհրաժեշտ ե ամբողջ թափով ծավալել պատրաստի և յեփելու ու տապակելու համար պատրաստված մննդամթերքների արտադրությունը։ որինակ, պատրաստի չոր նախաճաշեր՝ յեղիպտացորենից, ցորենից ու բրնձից, սոսիսկաներ, յերշիկներ, զանազան կոնսերվներ—մսի, կաթնեղենի, բանջարեղենի և մրգի. տոմատի և պտուղի հյութեր, սառեցված ու կոնսերվացիայի

16

յենթարկված, թեթևակի յեփիված, բանջարեղեն-յեղիպտացորեն, կանաչ բակլա ու սխսեռ. հում թիֆչտեքներ ու ոտքիվնոյ կոտլետներ, նաև պատրաստի կոտլետներ, ձուկ՝ նախապես ձկնաղործարաններում մաքրված, և այլն։

Մեր սննդի արդյունաբերությունը միանդամայն նախապատրաստված ե այս խողիրի լուծման համար։

Թէ վորքան ե աճել մեր սննդի արդյունաբերությունը, կարելի յե դատել թեկուզ հետեւյալ թվերից. կոնսերվներ արտադրվել են 1937 թվին—877,2 միլիոն տուփ 1932 թվին արտադրված 484,6 միլիոն տուփի դիմաց. յերշիկ և ապիտեղեն 1937 թվին արտադրվել ե 326 հազ. տոնն 1932 թվի 59,2 հազ. տոննի դիմաց. կոտլետներ 1932 թվին չեցին արտադրվում, իսկ 1937 թվին արտադրվել ե 56 միլիոն հատ. ձկան սառեցրած փիլե 1932 թվին նույնպես չեր արտադրվում, իսկ 1937 թվին արտադրվել ե 129 հազ. ցենտներ. հյութեր սկսել են արտադրվել 1937 թվից և հենց այդ տարում տվել են 4,8 միլիոն տուփ։

Սրանից յերեւում ե, վոր պատրաստի ու յեփելու համար պատրաստված սննդամթերքների արտադրության մեջ ևս ամերիկյան մեթոդները ԽՍՀՄ-ում ողտագործված են, բայց առայժմ զեռ անբավարար մասշտաբներով այնպիսի մի յերկրի համար, ինչպիսին և մեր յերկիրը։ Այսպես, որինակ, Մոսկվայի մոի կոմբինատում յուրաքանչյուր որ արտադրվում է մինչև 300 տոնն զանազան յերշիկեղեն և սոսիսկաներ, ալելի քան 800 հազար հատ պատրաստի կոտլետ, 15—17 տոնն պելմեն. կաթնեղենի և մսեղենի արդյունաբերության ժողկումատի Մոսկվայի միքանի Փարբիկաներում (չաշված ճաշարաններն ու ռեստորանները) ամառը յուրաքանչյուր որ արտադրվում է 55—60, իսկ ձմեռը՝ մոտավորապես 25 տոնն պազպազակ։

Խողիրն այն է, վոր այդ դործն ամբողջ թափով ծավալենք և վոչ միայն Մոսկվայում ու Լենինգրադում, Խարկովում ու Կիևում, Բաղվում ու Թրիլիսիում, այլև բոլոր մյուս քաղաքներում։ Դրա բոլոր հնարավորություններն առկա յեն։ Պետք ե հուսալ, վոր նոր ժողկումները՝ սննդի



արդյունաբերության ժողկոմ ընկ. Զոտովը, մասնակի ու կաթնեղենի արդյունաբերության ժողկոմ ընկ. Մմիւնովը և ձկնարդյունաբերության ժողկոմ ընկ. Ժեմչուժինան, վորոնք ունեն և՝ զիտելիքներ, և՝ ճաշակ գեպի գործը, և՝ բավականաչափ յեռանդ, —այդ խնդիրը գործի կրերեն և շուտով մենք կունենանք խորհրդային մարկայի առաջնակարգ մթերքների առատություն, իսկական առատություն։ (Ծափահարություններ)։

Դորակեսղի անտեսուհիները կարողանան ավելի լավ ապրել և յուլա գնալ առանց սպասուհու, հարկավոր է նաև, վորթե արդյունաբերությունը, կարի, կոշկեղենի և արդուղարդի ճյուղերը նույնական հարմարվեն բնակչության կարիքներին; պատրաստեն պետքական չափերի ու ճեղքի հագուստ ու կոշկեղեն, և անտեսուհիներին ազատեն անձամբ կարելու կամ թե գնված պատրաստի հաղուստը ձևափոխելու անհրաժեշտությունից։

Թեթև արդյունաբերության արտադրանքը 1937 թվին տվել և աճում 1932 թվի դիմաց—վերնազգեստ տրիկոտաժի գծով՝ 276%, տրիկոտաժային սպիտակեղենի գծով՝ 447,8 տոկոս, դուլպա-կիսադուլպաների գծով՝ 223%, և կոշկեղենի գծով՝ 182 տոկոս, բայց դա դեռ շատ ու շատ անբավարար ե, յեթև չմոռանանք, թե վորքան շատ բնակչություն ունենք մենք և նա այդ ապրանքների ինչպիսի մեծ պահանջ ե ներկայացնում։ Հատկապես մեծ չափով հետ և մնում այդ արտադրանքների վորակը։

Թեթև արդյունաբերությունը պետք է արտադրի արդուղարդի այն բոլոր ապրանքները, վորոնք մեզ անհրաժեշտ են, այդ թվում բարձրորակ ապրանքներ։ Մի՞թե ամոթ չեթեթև արդյունաբերության աշխատողների համար, վոր, յեթև, ասենք, մի կին լավ դուլպաներ ունի, ասում են՝ «Հավանորեն արտասահմանյան ե»։ Ինչո՞ւ չի կարելի մեղմոտ ավելի շատ արտադրել լավ դուլպաներ։ Կամ թե վերցրեք լավ գալստուկը, —ասում են՝ «Հավանորեն արտասահմանյան ե»։ Առաջ այդպիս եր սննդի ապրանքների առարկություն։ Յեթև վաճառվում եր լավ խմբչք կամ լիկոր։

ասում ելին—«փարիղյան ե», կամ յեթե վաճառվում ելին լավ սոսիսականեր, ասում ելին—«գերմանական ե», լավ շամպայն, ասում ելին «Փրանսական ե»։ Այժմ մեզ մոտ ունենի բնադրավառում կա խորհրդային ամեն բան—վորակալ վոչ ավելի վատը, իսկ շատ գեղքերում արտասահմանյանից ավելի լավը։ Ինչո՞ւ հազար այնպես չափել, վոր լավ դուլպաները լինեն վոչ թե արտասահմանյան, այլ խորհրդային գուլպաներ, լավ գալստուկները լինեն վոչ թե արտասահմանյան, այլ խորհրդային, լայն սպասման բոլոր ապրանքները լինեն արտասահմանյան նմուշների մակարդակին կամ ավելի լավը։

Այս խնդիրը մեզ համար հեշտ լուծելի յե։ Մենք լուծել ենք վիթխարի խնդիրներ։ Հաճելի յեր լսել, յերբ ընկ. Վորոշիլովը գեկուցեց այն մասին, վոր 5 տարվա ընթացքում մեր յերկիրը կարմիր Բանակին տվել և 8 միլիոն ձի մոտոների միջնորդ։ (Ծիծաղ)։

Այդ բանն անել կարելի յե և դրա համար շատ ժամանակ չի հարկավոր։ Հարկավոր է ամենաշատը մեկ-յերկու տարի այդ գործը կանոնավորելու համար, և մենք կունենանք լայն սպասման առաջնակարգ արտադրանք։ Հարկավոր ե, վորպեսզի արդյունաբերական քաղաքների տեղական կուսակցական կազմակերպությունները լծվեն այդ աշխատանքին։

Տնտեսական խորհուրդն արգեն ձեռնամուխ և յեղել այդ գործին, դուրս և զրել ապրանքների արտասահմանյան նմուշներ, ստեղծել և մի կազմակերպություն, վորը տնտեսավարներին կանչում ե և ասում՝ «Դուք կարո՞ղ եք անել այսինչ բանը, թե վոչ։ Յեթև կարող եք, խոստանում ենք մրցանակ տալ, կտանք հումք, աշխատեցեք»։ Արդեն միքանի հարյուր գործարաններ վերցրել են արտասահմանյան նմուշները, կնքել են դրանց յուրացման վերաբերյալ պայմանագրեր և աշխատում են։ Շուտով մենք կունենանք տառնյակ ու հարյուրավոր անուններով ապրանքներ ըստ արտասահմանյան լավագույն նմուշների, բայց խորհրդային արտադրության։

Պետք ե ապրանքների վորակը բարձրացնել բարձր մաս-
կարդակի: Պետք ե այնպես անել, վոր այլևս չնայեն ար-
տասահմանյան ապրանքներին, պետք ե այնպես անել, վոր
վոչ թե Փարիզի ու Լոնդոնի, այլ Մոսկվայի ու Լենինգրա-
դի ապրանքները լինեն ամենալավագույնները: Յեվ դա կա-
րելի՞ յե անել: Յեթև թեթև արդյունաբերության ժողկոմա-
տի աշխատողներն ուղղում են լինել իսկական բոլշևիկներ,
այդ խնդիրը նրանք պետք ե լուծեն ամենակարճ ժամկե-
տում: Զեր ուշադրությունն ուղղում եմ հրավիրել ևս մեկ
հանդամանքի վրա: Մեզ մոտ տնտեսավարներին շատ են
յերես տվել: Մեր յերկիրը շատ հարուստ ե ամեն տեսակ
հումքով, բարձրորակ բամբակ՝ վորքան ուղեք, բարձրորակ
վուշ վորքան ուղեք: Յածը տեսակի բամբակը դեն են
չպրոռում, մնացուկները դեն են չպրոռում, կարծում են,
թե մնացուկները պետք ե վոր հենց այդպես ել լինեն մնա-
ցուկները: Իսկ արտասահմանում կարողանում են մնացուկ-
ներից պատրաստել նույնապիսի ապրանքներ, ինչպես և լավ
հումքից: Իսկ ինչո՞ւ հապա մենք չենք ողտագործում այդ
մնացուկները: Դա ի՞նչ անկարգություն ե: Մենք նույնապես
կարող ենք ողտագործել, մենք նույնպես կարող ենք այդ
անել, միայն թե յերես են առել: Յերես են առել շատ արն-
տասավարներ, իսկ նրանց հարկավոր ե ստիպել աշխատելու
ինչպես հարկն ե:

Մենք ի՞նչ ենք արել այդ բնագավառում: Ընկեր Ստա-
մինի խորհրդով անցյալ տարի մենք մըցանակ հայտարարե-
ցինք տնտեսավարներին՝ ցածը տեսակի բամբակի ողտա-
գործման համար: Յես այժմ տեղեկություններ ունեմ թեթև
արդյունաբերության ժողկոմատից, վոր մինչդեռ առաջ
ցածը տեսակի բամբակի մնացորդներն աճում եյին, այժմ
դրանք խիստ կրճատվել են:

Նշանակում ե, հարկավոր ե միայն ձեռնամուխ լինել,
և մենք ամեն բան կունենանք: Հարկավոր ե պայքարել այն
բանի համար, վորպեսզի մնացուկներից ապրանքներ պատ-
րաստին, այդ ժամանակ մենք կունենանք ավելի շատ
հումք և ապրանքները կլինեն ավելի եժան: Առայժմ այդ

բնագավառում թեթև արդյունաբերության մեջ կան չառ
յերկշուտ տեղաշարժեր:

Այժմ, յերբ ժողկոմատները բաժանված են՝ տեքստիլ
արդյունաբերությունն առանձին և թեթև արդյունաբերու-
թյունն առանձին, պետք ե յենթաղբել, վոր թեթև արդյուն-
աբերությունը և նրա ժողկոմը ընկ. Լուկինը ինչպես հարկն
ե ձեռնամուխ կլինեն բնակչությանը կարի, տրիկոտաժա-
յին, արդյուղաբդի և կոշկեղենի ապրանքներով սպասարկե-
լուն:

Պետք ե նկատի ունենալ, վոր մենակ թեթև ու սննդի
արդյունաբերության ժողկոմատները բնակչության մատա-
կարգման խնդիրները չեն լուծի: Շատ ապրանքներ արտա-
դրում են ծանր արդյունաբերության ժողկոմատները և
մյուս բոլոր արդյունաբերության ժողկոմատները նույնպես
արտադրում են լայն սպասարկման ապրանքներ: Որինակ՝ մե-
տաղյա մաշճակալներ ու կահույք, ժամացույցներ, ուս-
ղիունդունիչներ, պլաստիկաներ, պատեփոններ, հեծանիվ-
ներ, սառնարաններ, մետաղյա ամանեղեն, զդալներ և այլն
պատրաստում են զանազան ժողկոմատները, պատրաստում
են ծանր ու տեղական արդյունաբերության ժողկոմատները:
Զժանդուող և նիկելապատ պողպատները, —այս բոլորը
ծախսվում ե լայն սպասարկման առարկաների վրա մեծ քանա-
կությամբ: Մենք պետք ե հասնենք այն բանին, վոր այդ
ժողկոմատները լայն սպասարկման արտադրանքին չնայեն վոր-
պես յերրորդական դործի, վոր նրանք լայն սպասարկման
առարկաների արտադրությամբ զբաղվեն ինչպես հարկն ե:

Ընկ. Ստալինը կուսակցության XVII համագումարում
ասել ե.

«...6) Ծալալել լայն սպասարկման ապրանքների
արտադրությունը բոլոր տնտեսական ժողկոմատների
դծով:

7) Ծալալել տեղական խորհրդային արդյունաբե-
րությունը, հնարավորություն տալ նրան ձեռներե-
ցություն յերևան բերելու լայն սպասարկման ապրանքնե-

բի արտադրության գործում և ցույց տալ նրան հնարավոր ողնություն հումքով ու միջոցներով»:

Պետք է ուղղակի ասել, վոր անրավարար ե կատարվում ընկ. Ստալինի այս ցուցումը, վորովհետեւ հնարավորությունները վիթխարի յեն, պահանջները մեծ, իսկ արված ե գեռես քիչ բան:

Ընկեր Ստալինն արդեն բերեց թվեր, վորոնք խոսում են յերկրում, քաղաքում և դյուզում ապրանքաշրջանառության վիթխարի աճման մասին: Բայց պետք է ուղղակի ասել, վոր բնակչության պահանջները, բնակչության նյութական բարեկեցությունն ու յեկամուտներն աճում են ավելի արագ, քան թե ապրանքաշրջանառությունն ե զարգանում. այստեղից ել ճեղքվածք ե առաջ գալիս պահանջարկի և ապրանքաշրջանառության աճման տեմպերի միջև: Այս թե ինչու մենք պետք ե ուժեղացնենք ապրանքաշրջանառությունը, լուրջ միջոցներ ձեռք առնենք առետուրը բարելավելու ուղղությամբ:

Կենտկոմը և Ժողկոմխորհը հատկապես զբաղվում եյին դյուզում առեւտրի բարելավմամբ, սպառկոռպերացիայի աշխատանքի ամրապնդումով: Յենտրոսոյութիւնի աշխատանքի մեջ լուրջ փոփոխություններ են մտցված, և այժմ սպառկոռպերացիան սկսել ե բարելավել իր աշխատանքը: Առաջ այստեղ նստած եյին վնասարարներ, իսկ այժմ նրա գլուխ դրված են աղնիվ ու բարեխիղմ մարդիկ:

Քաղաքային առեւտրի մեջ այժմ արդեն նկատելի յե վորոշ բարելավում, բայց գեռես թույլ են կաղըերը, չկագեռես հարկ յեղած կազմակերպում առաջադրված խնդիրները լավ լուծելու համար: Այդ ինդիբրները մեզ մոտ գեռես առջևում են և հարկավոր ե, վոր տեղական կազմակերպությունները լրջորեն ձեռնամուխ լինեն առեւտրի բարելավմանը, վորովհետեւ Առեւտրի ժողկոմատը և Յենտրոսոյութիւնը միայնակ իվիճակի չեն կենտրոնից գլուխ բերելու այդ գործը:

Խառնաշփոթություն կար գների մեջ այն խմասով, վոր բացթողման գները հաստատվում եյին կառավարության

կողմից, իսկ մանրածախ գները սահմանվում եյին տեղերում՝ առեւտրական կազմակերպությունների, չընպառկոոպների, գյուղապառկոոպների կողմից, բացթողման գների վրա վերադիր ծախսերի, փոխադրման ծախսերի և այլնի համար հավելումներ սահմանելու միջոցով: Հաճախ դա իրեւ հողեր ծառայում չարաշահումների համար: Վո՞րքան կալկուլատորներ են հարկավոր այդ ամենը ճիշտ կերպով կալկուլացիայի յենթարկելու համար:

Այժմ գործն արդեն ուղղել ենք նրանով, վոր ապրանքների մեծամասնության համար կառավարությունը հաստատել ե մանրածախ կայուն գներ, և սպառողը կարող ե գները ստուգել Տնտեսական խորհրդի կողմից հաստատված գնացակներով, վորոնք վոչ վոք իրավունք չունի փոխել:

Խառնաշփոթություն կար նաև տեքստիլ արդյունաբերության բացթողման գների մեջ, վորի հետևանքով արգյունաբերությունը մանուֆակտուրայի միքանի տեսակների գծով ուներ գերահույթ, իսկ այլ տեսակների գծով—պլանային մեծ վնասներ: Տնտեսավարներն աշխատում եյին գերակատարել շահույթային ասորտիմենտը և չկատարել ողուր չբերողը, իսկ ողուր չբերող ասորտիմենտը մեզ համար պակաս կարեւոր չե, քան գերահույթաբերը:

Այժմ այդ բոլորն ուղղված ե կառավարության կողմից:

Մեզ մոտ տարվում են խոչըր ունիվերմագներով: Ուզում են ունենալ ավելի խոչըր ունիվերմագներ, քան Ամերիկայում, իսկ դրանք տվյալ մոմենտին մեզ չեն սպառում: Հարկավոր ե, վոր մենք ունենանք ավելի շատ միջակ ու մանր խանութներ, վորոնք ցրված լինեն քաղաքների ու շրջանների տերիտորիաներում:

Ապրանքաշրջանառությունը մեզանում աճել ե 178%-ով, իսկ խանութների ցանցն աճել ե միայն 25%-ով: Քիչ ե: Հարկավոր ե ավելի շատ կառուցել խանութներ:

Ե՛լ ավելի վատ ե առեւտրական պահեստների դրությունը: Ապրանքաշրջանառության վիթխարի աճման պայմաններում պահեստների ցանցը հնդամյակի ընթացքում աճել ե

միայն 35%-ով: Պահեստներ քիչ կան, ապրանքները դարսվում են վոչ այսող՝ վորտեղ հարկավոր ե, յերբեմն վշառում են, պահեստների պակասը հող և ստեղծում չարաշահումների և հափշտակումների համար:

Հեռավոր կենտրոններում պահեստները հատկապես հարկավոր են, վորտեղի ապրանքների պաշար պահպի այնպիսի զեպքերի համար, յերբ ապրանքների փոխադրումն ուշանում ե, վորտեղի հնարավոր լինի ասորտիմենու ընթրելու ու մատակարարել խանութներին և կանոնավորել անընդմեջ առևտուրը:

Ըսկեր Ստալինը գեռ անցյալ տարի մեր ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, վոր Առևտուրի ժողկոմատը և Յենտրոսոյուղը մեծ հուճույքով առևտուր են անում կենտրոնական շրջաններում և տհաճությամբ են ապրանքներ փոխադրում պրովինցիան: Իսկ մեր պրովինցիայում շատ կարեռ գործեր են կատարվում, այդ պրովինցիայում կան շատ արդյունաբերական ձեռնարկություններ, այնտեղ արտադրվում են հացահատիկ և տեխնիկական կուլտուրաներ:

Կենտրոնի և ժողկոմխորհի հատուկ վորոշման մեջ այդ մասին ասված էր, վոր՝ «Շնորհիվ գյուղատնտեսության ինչպես հացահատիկային տնտեսության ու անասնաբուծության, այնպես ել տեխնիկական կուլտուրաների արտադրանքի ուժեղ աճման, գյուղացիական բնակչության պահանջարկը լայն սպասման ապրանքների ասպարեզում աճում և փոք թե որերով, այլ ժամերով: Մինչդեռ Առևտուրի ժողկոմատի և մանավանդ ՅԵՆՏՐՈՍՈՅՈՒՂի որդաններին անտեսում են գյուղն ու առանձին կենտրոնները, չեն իմանում դյուղի պահանջարկը և աշաճությամբ են ապրանքներ փոխադրում»:

Այս գրությունն ուղղելու համար և առևտուրն առհասարակ գյուղում ու մասնավորապես հեռավոր կենտրոններում բարելավելու համար այս ժամանակվա ընթացքում շատ բան և արփած, բայց առջևում ե'լ ավելի մեծ աշխատանք կա, վորտեղի առևտուրական աշխատողների բանակն սկսի աշխատել բոլչելիորեն:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐՑԵՐԸ

Ընկերներ, թույլ տվեք մի քանի դիտողություններ անել արտաքին առևտուրի հարցերի վերաբերյալ:

Միջազգային առևտուրը կրել ե այնպիսի արմատական փոփոխություններ, վորոնք կատարվեցին չնորհիվ կապիտալիստական յերկրներում սուեղծված վիճակի, վորը նկարագրեց ընկեր Ստալինն իր գեկուցման մեջ: Յերկրների մի մասը, ինչպիսի Գերմանիան, Խոտալիան և այլն, արդեն անցել են ռազմական ժամանակի եկոնոմիկային: Մյուս յերկրը կրը, վորոնք հարուստ են վալյուտայով, առանձին քայլեր են կատարում այդ ուղղությամբ և գնում են նույն այդ ուղիով: Շատ յերկրներ արդելք են սահմանել իրենց վալյուտայի արտահանման և ոտարերկրյա վալյուտայով նրա փոխանակման աղատառթյան նկատմամբ, ստիպելով վաճառքից ստացված վաստակը ծախսել նույն այդ յերկրում, իսկ յեթե չծախսվի, ապա թողնել բանկերում անշարժ վիճակում, այսինքն՝ Փինանսավորել այդ յերկրը:

Այժմ առևտուր են անում արդեն վոչ միայն բորսաներում, կոնցեններում ու ֆիրմաներում, այլ առևտուր են անում բուրքուական կառավարությունների մինիստրական կարինեաներում: Այժմ արդեն վոչ այնքան մասնավոր ֆիրմաների մը ըստթյունն ե վճռում, թե վոր ապրանքն ինչպիսի տեղ պետք ե զրայի շուկայում, վորքան պետական միջոցառումները՝ թագուն ու բացահայտ, և պետությունների միջև եքսպորտային ու իմպորտային կոնտինենտների վերաբերյալ պայմանագրերը—թե ո՞ւմ համար, վո'քան և ինչպիսի ապրանքներ ներմուծել:

Այստեղից ել բղիսում ե արտաքին առևտուրի հարցերի ավելի ու ավելի խիստ վերաճումը պետությունների արտաքին քաղաքականության:

Մեր արտաքին առևտուրի մեջ հարկ ե լինում հաշվի առնել, թե արտաքին առևտուրի ինչպիսի ոեթիմ ե սահմանված այս կամ այն յերկրում և ինչպիսի քաղաքական հարաբերություններ գոյություն ունեն ԽՍՀՄ-ի ու այդ յերկրների

ժիջե, վորովհետեւ առևտրական հարաբերությունները, նրանց բնույթն ու ծավալն ուղղակի կախման մեջ են դըստ-նրվում քաղաքական հարաբերություններից: Այստեղից ել ԽՍՀՄ-ի և այլ յերկրների միջև կնքված առևտրական պայ-մանագրերի ու համաձայնությունների բնույթի տարրերու-թյունը:

Մենք վերջին ժամանակներս կնքեցինք մի շարք պայ-մանագրեր: Մասնավորապես, այն բանակցությունները, զորոնք մեկ տարվա ընթացքում տեղի ելին ունենում են ԽՍՀՄ-ի և Խոտալիայի միջև, վերջերս ավարտվեցին այդ յերկրի հետ առևտրական շրջանառությունների ծավալի վե-րաբերյալ համաձայնության ստորագրումով: Առևտրական պայմանագրի և կնքված նաև մեր յերկրի ու Հեհաստանի միջև:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում արմատապես վո-խեց Միության արտաքին առևտրի բնույթը: Վորոնք են այդ փոփոխությունները:

Առաջին Հնդկամյակի ընթացքում մեր արտաքին-առև-տրական և վճարային բարանը լարված էր: 1928-ից մինչև 1932 թիվը ներառյալ ժամանակաշրջանում Միության ար-տաքին-առևտրական բարանը տվից պասսիվ՝ 465,5 միլիոն ամերիկյան դոլար, իսկ հետագա հինգ տարվա ընթաց-քում—1933 թվից մինչև 1937 թիվը ներառյալ, մենք ունե-ցանք 455,3 միլիոն ամերիկյան դոլար ակտիվ սալդո: Առաջ, յերբ մենք վայլյուտայի տեսակետից աղքատ ելինք, հաճախ զանազան բաներից վերցնում ելինք շատ թանգ վարկ, Փիրմաները մեզանից գջլում ելին մեծ տոկոսներ, չատերը գրանից հարստացան: Մենք այժմ արդեն վոչ մի-այն գաղաքել ենք ողտովել այդպիսի վարկերից, այլ վոր-ուուղի գրանց համար չվճարենք բարձր տոկոսներ, աշխա-տեցինք ժամկետից շուտ մարել այդ վարկերը: Մենք սկսե-ցինք ալելի շատ զնել կանխիկ դրամով, վորակեսի զնի հա-մար ավելի չվճարենք: Մենք այժմ հաճախ հրաժարվում ենք այն վարկերից, վորը մեղ առաջարկում են, այլ գրանք

վերցնում ենք այն ժամանակի, յերբ եժան են և տքվում են յերկարատես ժամկետով:

Այն ժամանակաշրջանում, յերբ մենք դեռ հետաժաշ-ելինք և աղքատ, գեռ չունեցինք մեր զարգացած մեքենա-շինությունը, իսկ ինդուստրիան հարկավոր եր կառացել ինչպես ել վոր լիներ, մենք հարկադրված ելինք արտա-սահման արտահանել շատ հումք և սննդամթերքներ, վո-րոնց կարիքը ինքնեւս զգում ելինք, և արտահանում ելինք նրա համար, վորպեսզի վալյուտա ձեռք բերենք, իսկ վալ-յուտայով դաղդյաներ զնենք արդյունաբերության համար, սարքավորում՝ տրակտորային ու ավտոմոբիլային գործա-րանների համար:

Մենք 1933 թվին արտահանել ենք, որինակի, 37,2 հազ. տոնն կենդանական յուղ, 23,300 տոնն բռւսական յուղ, 19 հազ. արկդ ձու, 2,3 հազ. տոնն բեկոն և 5 հազ. տոնն թոշուն:

Այժմ մենք չենք արտահանում վո՛չ կովի յուղ, վո՛չ բռւսական, վո՛չ ձու, վո՛չ բեկոն, վո՛չ թոշուն, վորովհե-տե մենք ընդարձակում ենք ներքին սպառումը և մեր խա-նություններն են զնում ամրող աճը, ինչպես նաև այն հիա-նալի վորակի մթերքները, վորոնք առաջ զնում ելին եքս-պորտի համար: (Ծափակարություններ):

Զնայած բնողինի, նավթի, յերկաթահանքի և մի քանի այլ ապրանքների արտադրանքի մեծ աճին, նրանց եքս-պորտը կրծատվել կամ բոլորովին զալարեցվել է: Այդ ապ-րանքները նույնպես ուղղված են ներքին սպառման համար:

Այժմ, սոցիալիզմի հաղթանակի հետեանքով յերկիրն այնքան և հարստացել, վոր կարող ե իրեն թույլ տալ իր համար թողնելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է, իսկ ար-տահանել միայն ալելցուկը:

Մեր յերկիրն այժմ այնքան ուժեղ և տնտեսական տե-սակետից, վոր նա առանց ներմուծման կարող ե հիմնակա-նում բախարարել իր կարիքները: Ներմուծումը մենք զիսա-վորապես ողտագործում ենք այս կամ այն ճյուղի ալելցուկը:

արագացված դարձացման համար, քան այսոր թույլ են տալիս մեր Հնարավորությունները:

Մեր իմպորտի բնույթը նույնպես արժանի յէ Հատուկ ուշադրության, վորովհետեւ նրա մեջ զերակչում և մեքենական սարքավորման ու դադարյաների ներմուծումը:

Ամենահիանալին այն է, վոր, որինակ, 1928 թվին ներմուծվող մեքենական սարքավորման տեսակարար կշխոն այդ սարքավորման ներքին խորհրդային արտադրության համեմատությամբ կազմում եր 43%, իսկ այժմ, 1937—1938 թվականին, հասել ե մինչև 0,94%-ի, և վոչ այնքան խմբորոշ կրճատելու միջոցով, վորքան մեքենաների ու դադարյաների ներքին խորհրդային արտադրությունն ընդարձակելու միջոցով:

Այդ՝ ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի վիթխարի անդաշարժերի ազացույցն է, վորոնք խոսում են այն մասին, վոր մենք իրոք ինդուստրիալ յերկիր ենք և վիթխարի մասշտարով արտադրում ենք մեքենաներ ու դադարյաներ:

Կապիտալիզմի յերկրներում ճշնաժամը Հասցնում է եքսպորտի և իմպորտի կրճատման: Իսկ մեզ մոտ տեղի ունի եքսպորտի և իմպորտի վորոշ կրճատում, չնորհիվ ընդլայնված սպառման բաղայի վրա հենվող արտադրության ավելացման: Որինակ, ուս մետաղների իմպորտը կրճատվել է, 1932 թվի 908 հազար տոննից 1938 թվին իջնելով մինչև 145 հազար տոննի: Դա վոչ թե այն պատճառով, վոր մենք մետաղ ամենի քիչ ենք սպառում: Վո՞չ, մեղ մոտ մետաղի սպառումն ուժեղ կերպով աճել է: Բանն այն է, վոր աճել և մետաղների խորհրդային արտադրությունը: Մենք բնական կառչուկ ներմուծում ենք մի փոքր պակաս, քան 1928—1929 թվականներին, իսկ կառչուկի սպառումն աճել է միքանի անգամ:

Կամ ահա թեյը, վորի իմպորտը կրճատվել է: 1932 թվին մենք ներմուծել ենք 15.900 տոնն թեյ, իսկ անցյալ տարի՝ 1938 թվին, ներմուծեցինք միայն 13 հազար տոնն: Մինչդեռ թեյի սպառումը յերկրում չի կրճատվել, —այն

ուժեղ կերպով աճել է և, ինչպես ընկեր Զարկիլիանին այսպես պատմում եր, յեր թեյի բոլոր տնկված թփերը կասն լրիվ բերք, մենք կղաղարենք թեյ ներմուծելուց և նրա դնման համար վայրուտաք ծախսելուց: 1932 թվին մենք թեյ գործածում եյինք 16.500 տոնն, գրանից խորհրդային թեյ միայն 600 տոնն, իսկ 1938 թվին գործածել ենք 20 հազար տոնն թեյ, զրանից խորհրդային թեյ՝ 7 հազար տոնն: Իսկ ընկ. Զարկիլիանին ասաց, վոր յերրորդ հնդամյակի վերջում նրանք պատրաստվում են տալ 20 հազար տոնն խորհրդային թեյ հենց միայն Վրաստանից, իսկ չե՞ վոր թեյ արտադրում ե նաև Ադրբեյջանը:

Այժմ մենք ունենք մեր թեյը, ըստվորում մեր թեյը նույնպիսին ե, նույնիսկ ավելի լավը, ավելի համով, վորովհետեւ դա խորհրդային թեյ է, մեր Հարազատ թեյը, և վոչ թե արտասահմանյան: (Ծափակարություններ):

Նմանապես արտասահմանում մենք ավելի քիչ ենք գնում ցիտրուսային պատշներ և վոչ թե այն պատճառով, վոր սպառումը կրճատում ենք, —մեզ մոտ սպառումն աճում է տարեցտարի, —այլ այն պատճառով, վոր ստանում ենք արևագա Վրաստանից: Մենք ունենք կիտրոնի, մանդարինի և նարնջի ծառերի ծաղկող այդիներ, վորոնք 1938 թվին տվին 240 միլիոն հատ, իսկ 1939 թվին կտան մինչև կես միլիարդ հատ ցիտրուսային պատճ և միքանի տարուց հետո, յերբ տնկված ծառերը կաճեն, կարելի կլինի ունենալ ավելի քան յերկու միլիարդ ցիտրուսային պատճ, այսուղից, վորտեղ առաջ իշխում եյին մոծակներն ու մալարիան, և վորտեղ տնօրինություն եր անում դյուզի աղքատությունը: Վրացական կոմունիստներն ընկ. Լավքենատի Բերիայի գլխավորությամբ հիանալի աշխատանք կատարեցին Արևմտյան Վրաստանում, վորաեղ արդեն այժմ տառաձին անկյուններ կալիֆորնիայից ավելի լավն են և հեռու չե այն ժամանակը, յերբ մենք կունենանք մեր խորհրդային կալիֆորնիան, ավելի լավը՝ ամերիկականից: (Ծափակարություններ):

Մենք վոխում ենք արտաքին առևտրի աշխատանքի մե-

Թողները բարելավման խմաստում, մասնավորապես փոխում ենք պլանավորման մեթոդները:

Արդեն վերջ ե արված արտաքին առևտորի աղտոտմանը լրտեսական-լնասարարական աարերորդ, վորոնք պետական ժիշոցներն ոգտագործում ենին արոցկիստական սրբիկաներին կերակրելու համար:

Մենք կհասնենք այն բանին, վոր Արտաքին առևտորի ժողկոմատի բոլոր որդաններում, ամեն տեսակ պաշտօնների մեջ՝ արտասահմանում նստած լինեն ստուգված, մինչև վերջը խորհրդային իշխանությանը նվիրված, Խորհրդային Սիոնթյան արժանավոր ներկայացուցիչները և վոր նրանք անսպիկ ամրոց ներկայացնեն կապիտալիզմի հանուեպ, նրա քայլայիշ տշխատանքի, ուսարերկրյա հետախուզությունների լրտեսական վոանձգությունների հանդեպ:

Մենք արտասահմանում աշխատելու համար ջոկատ ենք մեր հայրենիքին հավատարիմ այնպիսի զավակներ, վոր կարողանանք պարծենալ արտասահմանյան խորհրդային աշխատողներով: (Ծափահարություններ):

ԿԱԴՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԼ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Բնկերներ, մեր կուսակցության հաջողություններն անհամեմատ ավելի շատ կլինելին, քան այն, վոր մենք այժմ ունենք, յեթե մենք աշխատեյինք ավելի լավ, յեթե կառակցության կազմակերպական աշխատանքն ամրողապես դրույիր այն մակարդակի վրա, վորի վրա գտնվում է մեր կուսակցության քաղաքական դիմուլ:

Վազիմիրի իլլիչը միշտ ասում եր, վոր գլխավորն աշխատանքի մեջ, ճիշտ զծի առկայության դեպքում, —այդ՝ կադրերի ընտրությունն ե և կատարման ստուգումը: Նույնը մեզ մատնանշում ե ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինը կուսակցության XVII համադումարում իր զեկուցման մեջ հասուի զլուխ նվիրեց կատարման ստուգմանը և կադրերի ընտրությանը: Դա վոչ թե զեկուցման սոսկ մի զլուխ ե, դա մի ամրող ուսմունք է կազմա-

կերպական հարցի վերաբերյալ, ու բոլշևիզմի կազմակերպական գիտությունն ե:

Մենք դեռ չենք կարողանում մինչև վերջը բոլշևիկորեն աշխատել: Բոլշևիկորեն աշխատելու մենակ ցանկությունը քիչ ե: Հարկավոր ե վերադաստիարակել իրեն, հարկավոր ե մշակել այնպիսի բնագործություն, վոր յեթե ստուգում է կատարվում, ապա դա լինի սիստեմատիկ:

Ահա թե ինչ ե ասել ընկեր Ստալինը XVII համագումարում: «Ճիշտ գիծը տրվելուց հետո, հարցի ճիշտ լուծումը տրվելուց հետո—զործի հաջողությունը կախված է կազմակերպական աշխատանքից, կուսակցության գիծը կենապործելու համար մղվող պայքարը կազմակերպելուց, մարդկանց ճիշտ ընտրությունից, զեկավար մարմինների վորոշումների կատարման ստուգումից: Առանց դրան՝ կուսակցության ճիշտ գիծն ու ճիշտ վորոշումները լուրջ վնաս կրելու որոշկի յեն յենթարկվում: Դեռ ավելին. քաղաքական ճիշտ գիծը տրվելուց հետո՝ կազմակերպական աշխատանքն ե վճռում ամեն ինչ, այդ թվում նաև հենց իր՝ քաղաքական գծի ճակատագիրը, —նրա իրականացումը կամ վիճումը... Գլխավորը կազմակերպական աշխատանքի մեջ—մարդկանց ընտրությունն ու կատարման ստուգումն ե:

Վորապեսզի ունկավարենք ինչպես հարկն ե, հարկավոր ե վոչ միայն նախապատրաստել հարցի ճիշտ լուծումը, այլ և միշոցներ ձեռք առնել կատարումն ապահովելու ուղղությամբ, կատարումը հանձնարարել ինչպես պետքն ե ստուգման մարդկանց, ստուգել կատարման ընթացքը, միջամտել կատարման ընթացքին, մտցնել հարկ յեղած ուղղումները, յեթե զբանք թեւալրում ե անհրաժեշտությունը, քանի դորձը չի կատարված մինչև վերջը:

Իսկ մեզ մոտ, ահա, հաճախ այսպիս ե լինում. կը ըի լավ վորոշում (լավ վորոշում զբելը, իհարկե, մեծ գործ ե), հետո անցնում են մեկ ուրիշ լավ վորոշման, իսկ թե ինչպես կը ընթանա պոաշին վորոշման կատարումը—չին հետաքրքրվում:

Լավ վորոշումը, վորը չի ապահովված կատարումալ,

դա դասարկ կրտելոց է: Պրակտիկայում հաճախ վորոշում—ները վեր են ածվում դասարկ կրտելոցի, վորովհետև վորոշում կայացնելիս միջոցներ ձեռք չեն առնված կատարումը աղահովելու համար, հրահանդիված չեն կատարողները, չի կատարվում կատարման ստուգումը՝ աշխատանքի ընթացքում:

Այսպիսի պրակտիկան, ամեն ինչից բացի, փչացնում է կադրերը, վորովհետև նրանք սովորում են չկատարել կոմիտեի վոչ ստույդ կերպով կատարել վերադաս որդանների վորոշումները: Ել ի՞նչ բոլշևիկյան աշխատանք, յեթե լավ վորոշում է կայացվում և չի կիրառվում կյանքում: Խղում է ստացվում խոսքի և գործի մեջ, իսկ ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, վոր բոլշևիկի մոտ չկետք ե լինի վոչ մի խղում խոսքի և գործի միջև, պետք է լինի լիակատար համապատասխանություն խոսքի և գործի միջև, իսկ յեթե մենք չապահովենք կատարման ստուգումը՝ կլինի անխռուսավելի խղում:

Որինակ, ի՞նչպես են ստուգում մարդկանց: Ստուգում են հարցաթերթիկը, և վերջ: Ճիշտ է, հարցաթերթիկը հարկավոր է, բայց մի՞թե կարելի յե հենց միայն հարցաթերթիկով* ստուգել մարդուն: Իսկ կատարման լավ, սիստեմատիկ ստուգումը ցույց կտա, թե ո՞վ է լավ աշխատում, ո՞վ է լորդ, ո՞վ է բարեկիղճ, ո՞վ է սարոտածինիկ ու բյուրոկրատ, ո՞վ է ազնիվ, ո՞վ է ընդունակ և ո՞վ է անհուսավի, ո՞ւմ պետք է առաջ քաշել ու խրախուսել և ո՞ւմից պետք է աղատվել:

Վերջին յերկու—յերեք տարվա ընթացքում կուսակցությունը բացառիկ հաջողություններ ունի կաղմակերպական աշխատանքի վերելքի գործում, կուսակցության կաղմակերպական աշխատանքը քաղաքական գծի մակարդակին հասցնելու գործում: Մենք առայժմ գետ չենք կարող առել, թե լիովին լիկվիդացիայի յենք յենթարկել կաղմակերպական աշխատանքի հետ մնալը քաղաքական գծից, բայց այդ բնադրավառությունը կուսակցության ձեռք բերած հաջողությունները, կադրերի ընարության և կատարման ստուգում:

Ովն կուսակցության XVII Համագումարում ընկեր Ստալինի տված ցուցումների հետևողականորեն կենսագործումը,—պետք է մեզ համար արահովեն կազմակերպական աշխատանքի բարձրացումը զարգացման նույն այն բարձր աստիճանին, վորի վրա բարձրացված ե՝ կուսակցության քաղաքական դիմում:

Ընկերներ, մեզ այժմ վոչ մի տեսակ հաջողություններով չի կարելի զարմացնել: Մեր ժողովրդին այժմ վոչնչով չես զարմացնի և վոչնչով չես վախեցնի: Հարց ե ծագում, թե ինչո՞ւ յե այդպես: Վորովհետև սպատմությունը մեզ քաջալերել ե հաղթանակներով: Ո՞ւմ ենք մենք պարտական այն բանի համար, վոր բազմամիլիոն յերկիրը միավորվել ե, գառնալով մեկ ամբողջական սոցիալիստական պետություն, վորին վոչ կարող հազթել: Դրա համար մենք պարտական ենք Լենինին, մարդկության մեծագույն հանճարին, վորը վոչ միայն կարողացավ ամենայն հետևողականությամբ կիրառել Ռուսաստանում Մարքոսի—ենդելով հեղափոխական թեորիան, այլև զարգացնել այն, լրացնել պլրութարական հեղափոխության և ողբունակիատի դիկտատուրայի մասին ուսմունքով:

Մենք Լենինին ենք պարտական այն բանի համար, վոր ընկեր Ստալինի հետ միասին նա կոփեց բոլշևիկների կուսակցությունը ցարիզմի գեմ մզկած պայքարում, դաստիարակեց նրան բոլշևիկյան անհաշտության ու սկզբունքայնության վոգով, ողբանակը Հոկտեմբերյան հեղաշրջումը, աղահովեց հաղթանակը քաղաքացիական պատերազմի մեջ և անցումը՝ քայլքայլած տնտեսության վերականգնմանը:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի ձեռք բերած հաղթանակի համար մենք պարտական ենք Լենինի գործի արժանանալոր շարունակողին—մեծ Ստալինին, վորը Լենինի գաղաղի մոտ, կուսակցության և ամբողջ խորհրդային ժողովրդի անունից, սրբազն յերդում տվեց բարձր պահել կոմունիզմի մեծ դրոշը, մինչև վերջը հայտարիմ լինել լինինյան պատգամներին և անդուլ կերպով շարունակել Լենինի սկսած զործը: (Ծափահարություններ):

Աւզդակի պետք ե ասել, վոր ընկեր Ստալինն ամբողջ կուսակցության գլուխ անցած սրբությամբ ու անխախտ կերպով կատարում ե թր տված յերդումը։ (Ծափակարություններ) :

Անչափ մեծ է ընկեր Ստալինի ծառայությունն այն բանում, վոր նա զարգացրեց ու լրացրեց Լենինի ուսմունքը սոցիալիստական հասարակության կառուցման դաշտաշրջանում նույնական ինչպես վոր Լենինը դարձացրեց ու լրացրեց Մարքսի ուսմունքը պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում։ Ընկեր Ստալինը զիստականուրնն հիմնալորեց մեկ յերկրում սոցիալիզմի հաղթական կառուցման հասարակությունը, նա ստեղծեց ուսմունք սոցիալիստական հասարակության կառուցման մասին, ուսմունք սոցիալիստական պետության և սոցիալիստական ինտելիգենցիայի մասին։ Իրավամբ կոմունիզմի ուսմունքը մեղմութ համարվում ե Մարքսի—Ենդելսի—Լենինի—Ստալինի ուսմունք։ (Ծափակարություններ) :

Ամելին, ընկեր Ստալինն ապահովեց սուստիան հեղափոխության դժվարագույն խնդրի, դյուղացիական անսամբլության սոցիալիստական վերակառուցման և հարյուրմիլիոնանոց դյուղացիությունը կուտանսային կարգի մեջ ներդրավելու խնդրի պրակտիկ լուծումը։

Ամենակարճ ժամանակամիջոցում հասնել այնպիսի համաշխարհային պատմական հաղթանակի, վորի մասին յերաղել անդամ չելին կարող մարդկության լավագույն մըսքերը, հասնել այն բանին, վոր դարերով բաժան-բաժան ապրած մեր դյուղացիությունն սկսի ապրել սոցիալիստականուրին, —այս բանը հնարավոր յեղալ միայն այն որատնառով, վոր մեղ առաջ եր տանում Լենինի հավատարիմ ու արժանավոր աշակերտ հանձարեղ Ստալինը։ (Ծափակարություններ) :

Ընկեր Ստալինը նույնպես, ինչպես և Լենինը, հանդիսանուում է բարձրագույն տիտի ղեկավար։ Նա լեռնային արձել ե, վորը պայքարի մեջ չըխտ ահ և բոլշևիկյան կուսակցությանն ու խորհրդակային ժողովրդին համարձակութեան

առաջ ե տանում չանցած ուղիներով դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը։

Կե՛ցցե Լենինի—Ստալինի անպարտելի կուսակցությունը։ Փա՛ռք մեծ Ստալինին։

(Ծափակարությունների պռոքիում։ Պատգամավորները վոտի կանգնած յերկար ժամանակ վողջունում են ընկեր Ստալինին։ «Մեծ Ստալինին ուռա» բացականչություններով) :

22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Լայն սպառման ապրանքների արտադրության և ապ-	
րանքաշրջանառության հարցերը	10
Արտաքին առևտության հարցերը	25
Կադրերի ընտրությունը և կատարման ստուգումը	30

Հայերեն թարգմանության խմբագիր Ա. Հաբենց

Տեխն. խմբ. Ս. Խաչարյան

Մբարգրիչ Վ. Զիդիշյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավվարի լիազոր №Կ—2488, հրատ. № 670

Պատվեր № 75, տիրաժ 10,000, թղթի չափը 59×83¹/₁₆

(32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 2 1/4 տպ. մամուլ, 1 1/8 թերթ թուղթ

Հանձնված և արտադրության 7/IV 1939 թ.

Սարքագրված և տպելու 26/IV 1939 թ.

Գինը 35 կ.

Գետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչություն,

Երևան, Ալահիբերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0927962

10 МАЯ 1939

230

Ф. 35 ч.

11

28348

А. МИКОЯН

РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП (б)

Аригиз—Издательство полит. литературы
Ереван, 1939